

**Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում  
Առարկա. Կիրառական տնտեսաչափական վերլուծություն SPSS և STATA  
ծրագրերով**

**Անտառագիտ**

**Աշխատատարությունը՝ 4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ**

**Ստուգաբառ**

*Համառոտ նկարագրություն.* «Կիրառական տնտեսաչափական վերլուծություն SPSS և STATA ծրագրերով» դասընթացն ուղղված է ուսանողների վերլուծական և մոդելավորման գիտելիքների և կարողությունների ընդլայնմանն ու զարգացմանը, մասնավորապես՝ կարևոր տնտեսագիտական նշանակություն ունեցող վիճակագրական տվյալների հավաքագրման, վերամշակման, մաթեմատիկական և վիճակագրական վերլուծության իրականացման, ինչպես նաև համակարգչային ծրագրերի օգնությամբ էկոնոմետրիկ մոդելների կառուցման և գնահատման վերաբերյալ գիտելիքների և հմտությունների զարգացմանը և ամրապնդմանը:

Դասընթացն անհրաժեշտ է բոլոր տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար, քանի որ այն հնարավորություն է տալիս կիրառել մաթեմատիկական վիճակագրության մեթոդները այն բոլոր տնտեսական երևույթներն ուսումնասիրելու համար, որոնք ենթակա են քանակական գնահատման: Դասընթացը նպաստում է ուսանողների ընդհանուր վերլուծական կարողությունների զարգացմանը՝ կենտրոնանալով մեծ ծավալով տվյալների արագ վերամշակման և անհրաժեշտ արդյունքների ստացման էկոնոմետրիկ գործիքների կիրառման վրա:

Ուսուցման գործընթացում բացի SPSS և STATA ծրագրերից, նախատեսվում է կիրառել նաև Eviews ծրագրային փաթեթը, որը պարունակում է վիճակագրական տվյալների վերլուծության և մոդելավորման հարուստ գործիքակազմ և բավականին լայն կիրառություն է ստացել ինչպես տնտեսական քաղաքականություն իրականացնող պետական մարմիններում, այնպես էլ գիտական և ակադեմիական շրջանակներում:

*Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ.* Միկրոէկոնոմիկա դասընթացը փոխկապակցված է հետևյալ այլ առարկաների հետ՝ «Տնտեսագիտություն», «Մակրոէկոնոմիկա», «Հաշվապահական հաշվառում և վերլուծություն»:

*Ուսանողների գիտելիքների և հմտությունների նախնական մակարդակի նկատմամբ պահանջները.* Տվյալ դասընթացն սկսելիս՝ ուսանողները պետք է ունենան բավարար գիտելիքներ միկրո և մակրո տնտեսագիտության հիմնական

սկզբունքների և պատճառահետևանքային կապերի վերաբերյալ, ինչպես նաև տիրապետեն բազային վիճակագրական վերլուծության մեթոդներին: